




Վերջերս լույս տեսավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի հերթական գիրքը՝ «Հետաքրքրաշարժ լեզվաբանությունը», որը, ի տարբերություն հեղինակի նախորդ տեսական-գիտական ուսումնասիրությունների, ունի գիտահանրամատչելի բնույթ և կարող է հետաքրքրել հանրության լայն զանգվածներին: Գրքում լեզվի ու լեզվաբանության տարաբնույթ հարցերը ներկայացվում են հանրամատչելի գրույցների ձևով: Ասել, թե Լ. Խաչատրյանն առաջինն է այս ասպարեզում, ճիշտ չի լինի: Գիտության հանրայնացումը հայ իրականության մեջ կարևորել են բազմաթիվ հայտնի գիտնականներ՝ գիտության ամենատարբեր ճյուղերում՝ լեզվաբանություն, աշխարհագրություն, քիմիա, ֆիզիկա և այլն:

Լեզվաբանության ասպարեզում ևս կատարվել են մի շարք հաջողված փորձեր: Հիշարժան են երջանկահիշատակ գիտնականներ Լևոն Հախվերդյանի, Գևորգ Ջահուկյանի, Մերգեյ Աբրահամյանի, Հենրիկ Հարությունյանի, Մայա Ավագյանի, ինչպես նաև Պետրոս Բեդիրյանի, Ներսես Մկրտչյանի և այլոց արժեքավոր գրքերը, լեզվաբանական գիտության մասսայականացման, հայոց լեզվի նկատմամբ սեր ու պաշտամունք ձևավորելու գործում: Այսքանից հետո, թվում է, դժվար, եթե ոչ անհնարին պիտի լիներ այս ասպարեզում նոր խոսք ասելը, սակայն Լ. Խաչատրյանի «Հետաքրքրաշարժ լեզվաբանությունը» գալիս է մեկ անգամ ևս ասպացուցելու, որ աշխատասիրության և տաղանդի առջև նահանջում են բոլոր արգելքները, և լեզուն իր մեջ անսպառ գանձեր ու գաղտնիքներ է թաքցնում...

Դիտարկվող գիրքը բաղկացած է երեք թեմատիկ բաժիններից, որոնցից յուրաքանչյուրին հեղինակը խոստում վերնագիր է տվել: Առաջին բաժինը կրում է «Բառերի ու բառաձևերի անթեղված իմաստները» խորագիրը, որտեղ քննվում են բառերի ու բառաձևերի հին ու նոր իմաստները: Հանրահայտ է, որ լեզուների մեջ շատ են այն բառերը, որոնք մեկ և նույնիսկ մի քանի անգամ իմաստափոխության են ենթարկվել: Մա հեղինակին հնարավորություն է ընձեռել անդրադառնալու լեզվական որոշակի իրողությունների, ինչպիսիք են, օրինակ, իմաստափոխությունը, ձայնդարձը, բառային ու քերականական իմաստների մթագնումը, ստուգաբանությունը, զուգաբանությունը, փոխաբերությունը և այլն: Եվ այս ամենը մատուցվում է կարծես թե «իմիջիայլոց», «ձեռքի հետ», այնպես որ ընթերցողը ապրում է գեղարվեստական երկ ընթերցելու պատրանք, իսկ գիտելիքների յուրացումը կատարվում է աննկատ, առանց լարվելու և ճիգեր թափելու: Յուրաքանչյուր լեզվական փաստ, երևույթ ներկայացվում է ոչ թե մեկուսի, այլ համակարգային ընդգրկումով, որն առավել ցայտուն և ընկալելի է դարձնում նկարագրվող իրականությունները:

Այս բաժնում ընթերցողը կարող է հայտնաբերել, որ առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող բառերը իրականում բխում են նույն արմատից, ինչպես, օրինակ, խորանը և խորանարդը, փողկապը, փողոցը և խողովակը, պիղծը և պղտորը, կրնկակալը, կուսակալը, մաճկալը և կալանավորը, առակը, անառակը և խայտառակը, թռուցիկն ու մածուցիկը և այլն: Յուրաքանչյուր օրինակի բացատրություններն ու ստուգաբանությունները կատարված են գիտական բարձր մակարդակով, տարբեր լեզուներում դրանց ունեցած ձևերի զուգադրմամբ:

Երկրորդ՝ «Փոխառյալ բառերի իմաստաբանությունը» բաժնում խոսվում է բառային փոխառությունների մասին, բացահայտվում են դրանց նախնական ու արդի իմաստները, բերվում են համեմատական վկայություններ հնդեվրոպական մի շարք լեզուներից, մասնավորապես բառային զուգահեռներ են վկայվում լատիներեն, հին հունարեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, իսպաներեն, ռուսերեն և այլ լեզուներից: Այս բաժնի զրույցները բացահայտում են փոխառյալ բառերի կենսունակությունը ազգակից լեզուներում, դրանց կրած ձևային-հնչյունական փոփոխությունները, հաճախ՝ ձեռք բերած նոր իմաստները և այլն: Այստեղ կարելի է հանդիպել բառերի միջնորդավորված և անմիջական փոխառությունների, իմաստային պատճենումների, փոխառության ընթացքում բառերի կրած հնչյունական զանազան փոփոխությունների, որոնք, ինչպես զրքի առաջաբանում նշում է հեղինակը, լեզվական նոր միջավայրին «հարմարվելու» հետևանք են: Զրույցների վերնագրերի թվարկումն իսկ կարող է որևէ տարիքի ընթերցողի մեջ հետաքրքրություն առաջացնել քննարկվող հարցերի վերաբերյալ. «Լատինական «տախտակի» գործառույթները, «Վենետիկյան միաթի մակույկները», «Ի՞նչ ձև ունի լաբիրինթոսը», «Ծառերի արտասուքը և աչքերի միջի ջրվեժը», «Ուղտի կաշին նախագահի սեղանին» և այլն:

Այս բաժնից իմանում ենք, թե ինչ է կատակոմբան, ուր է տանում պողիումը, ինչի համար է իմունիտետը, ում է վերահսկում եպիսկոպոսը, որտեղ է գտնվում Շամը, ովքեր են նահատակները, բարբարոսները, կոնկիստադորները, վանդալները, ինչու է տրվում հոնորարը, ինչո՞վ են կերտել կուռքերին, ինչ է նվիրել լատիներենը երաժիշտներին, զինվորականներին, մարզիկներին և այլն, և այլն:

Երրորդ բաժնում («Հատկանունների խորհրդավոր աշխարհում») մատուցվում է հատկանունների իմաստաբանությունը: Այստեղ առավելաբար խոսվում է աշխարհագրական անվանումների նախնական-ստուգաբանական իմաստների մասին, իմաստներ, որոնք ի սկզբանե արտահայտել են հասարակ հասկացություններ, իսկ հետագայում վերածվել են հատուկ անունների: Այս բաժնում քննվում է աշխարհամասերի, երկրների, քաղաքների, գետերի, լեռների, կղզիների անունների ծագումնաբանությունը, ցույց են տրվում այն գործոնները, որոնցով պայմանավորված է հատկանունների առաջացումը: Այս կարգի իմաստափոխությունները քննվում են աշխարհագրական զանազան հայտնագործությունների պատմության համատեքստում, որն առավել հետաքրքիր և ուշագրավ է դարձնում հաղորդվող նյութը:

Հետաքրքրասեր ընթերցողը կիմանա, թե ինչպես է առաջացել ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի գլխավոր քաղաքի՝ Լոս Անջելեսի անվանումը: Քաղաքը հիմնադրել են իսպանացիները XVIII դ. վերջերին և անվանակոչել ի հիշատակ հրեշտակների Թագուհու՝ Աստվածածնի: Իսպաներեն այն ամբողջական բառակապակցություն է՝ Pueblo de Nuestra Señora la

Regina de los Angeles, որ նշանակում է «Հրեշտակների Թագուհու՝ մեր Տիրուհու քաղաքը»: Ժամանակի ընթացքում քաղաքի երկար անվանումից զգալի բաղադրիչներ «ընկել են», և այժմ այն ներկայանում է կարճ՝ Լոս Անջելես ձևով, որ նշանակում է հրեշտակներ(ի): Նույն ձևով է բացատրվում նաև Բուենոս Այրես քաղաքի անվանումը, որը նա ենթարկվել է «անդամահատման»:

Հեղինակի ոճի և պատմելաձևի մասին պատկերացում տալու համար բերենք մի փոքր հատված «Վաճառականների նավահանգիստը՝ մայրաքաղաք» գրույցից, որտեղ խոսվում է Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենի անվան ծագման մասին: «Այս քաղաքը պատմական աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է XI դարի առաջին կեսին Հավն անվանումով. դանիերեն havn - «նավահանգիստ» (հմմտ. ռուս. гавань - «նավահանգիստ»): Քաղաքի տարածքում XII դարում հիմնվում է մի ամրություն, որ ռազմաստրատեգիական կարևոր դիրք է զբաղեցնում: Այդ ամրության շուրջը շուրջը արագորեն աճում է մի բնակավայր, որտեղ կազմակերպվում էր ձկան առևտուր. այդտեղ վաճառականներ էին գալիս Բալթիկայի տարբեր երկրներից: Այդ բնակավայրը 1170 թ. անվանվել է Կոպենհագեն (Kopenhagen բառացի նշանակում է «վաճառականական նավահանգիստ»): Քաղաքի անվան գերմանական տարբերակն է Kopenhagen, որն էլ գործածական է աշխարհի շատ լեզուներում...

...Կոպենհագենն իր անցյալից խուսափել չի կարող, եթե հայացք նետենք հատկանվան բառակազմական ստուգաբանությանը, ապա մեր առջև կհանդիպեն խառնաբլուրի ձևեր՝ «վաճառականական նավահանգրվանը», Բալթիկայի աշխույժ վաճառականների նավահանգիստը» (192):

Եվ այսպես յուրաքանչյուր գրույց-ստուգաբանության մեջ երևում են հեղինակի պրպտող միտքը, տարբեր լեզուների իմացությունը, փաստերով և սկզբնաղբյուրներով «աշխատելու» կարողությունը: Գրքի փաստական նյութը հավաքելու համար Լ. Խաչատրյանը «մաղով է անցկացրել» ծովածավալ գրականություն՝ պեղելու համար այն հատիկը, որի շուրջ հյուսվում է գրույցը: Գիտահանրամատչելի ժանրը միջանկյալ դիրք է զբաղում գիտական և գեղարվեստական ոճերի միջև: Հեղինակին հաջողվել է պահպանել այդ փխրուն հավասարակշռությունը՝ տուրք չտալով գիտական մանվածապատ ոճին և ոչ էլ պարզունակ «գեղարվեստականությանը»:

Լ. Խաչատրյանի «Հետաքրքրաշարժ լեզվաբանությունը» հրաշալի նվեր է հայ երիտասարդությանը՝ բարձր դասարանների աշակերտներին և ուսանողներին, մանկավարժներին ու բարձրագույն դպրոցի մասնագետներին, լայն առումով՝ ողջ ընթերցասեր հասարակությանը:

ՍԱԲԱՊԵՏՈՅԱՆ Ռ. Կ.

Բանասիրական գիտությունների դոկտոր